

6336

9156.6)

a - 32

w 360

1338

3(56-6)

1337

A-32

ԳՐ. ԷԴ. ՆԱՊԻՄԵՆ

10

486

Է Պ Զ Բ Ո Ւ

*զերսաներկանց թարգմ.*

իսակակ Յարութիւնեանց

100



2004

ԹԻԳԼԻՒ

Տպարան Ա. Շարածէի, Նեկ., 21.

Типогр. М. Шарадзе, Ник., 21.

1896

1881

1881-43-44

## Ա Ա Թ Գ Զ Գ Յ

Արդիւ բանականագիր

Дозволено цензурою Тифлисъ. 7 Ноября 1895 г.

100 S

18 սկզբ հմայաց Ա մայոր  
 18 սկզբ հմայաց Ա մայոր  
 18 սկզբ հմայաց Ա մայոր  
 18 սկզբ հմայաց Ա մայոր

1881

այնպահ և զայր-զանու այնձնաց մղմացնելով  
 ունչ մալուխան վասպատ և պարթար զիան  
 զըրժիս իւսութ մականաց նոր վասպատ շահ

Էրգրումի դիրքը բաղարի բնորոշ յատկութիւնն  
 մէրը ամրոցը վերջին պաշարումը մողոցներուն ե-  
 ռացող կեաճը պաշարման դրութիւնն քրիստոնեա-  
 ների եւ մահմետականների մեջ տեղի ունեցած նորա-  
 գոյց արինանին կոփիները վաշիի երկու քրածնիա-  
 ցի բանարկեալները ուսար հիմքերի հսկողութիւնը  
 ուսիկամութեամ ձեռորվ վատթար տիեզիալութիւն-  
 ներ վաշիի մօս զաֆթիկներ տաշոն զացումնեա զօրքն  
 ու ոստիկամութիւնը Էրգրումի հայոց դպրոցը Պա-  
 հասարեան պատուհանութիւննեա: \*)

Բինվեօլ-Դաղի կամ Բիւրակնեան լեռների  
 կամքածն բարձրութեանց չուրջը սարահարթի  
 վրայ գանդաղ ու հանդարս հոսում են բազ-  
 մաթիւ գետեր գրանք բաւականին հեռանալով  
 Բիւրակնեան սարերից՝ նեղ վիհերի միջով կար-  
 կաչում են դէպի անդունդը և իրենց ջրերը  
 թափում Մուրադ-Զայի Փրատի կամ Արաքսի  
 հոսանքների մէջ: Մինչեւ Մուրադ-Զայի ա-

\*) Vom goldenen Horn zu den Quellen des  
 Euphrat. Von Dr. Edmond Naumann.  
 München und Leipzig. 1895.

Այս վեճնագիրը կողու ընդարձակ գրուածքի մի հա-  
 տուածն է կազմում „Էրգրումը“ որ մեր թարգմանութեամբ  
 անցնալ տաքի բյու տեսաւ նաև „Արծագանքի“ էջերուն:

Ժամանակակից վրայի բանականաց նոր վասպատ շահ

Ժ. Թ.

կունքներն որոնելու համար պէտք է բարձրացնաք Աղբ-Դաղի և Արարատի հսկայական լեռները՝ Փրատի կամ արևելեան Եփրատի սկիզբը պէտք է որոնենք անմիջապէս Երզրումի մօտակայքը, այն լեռնագաւառում, որ հիւսիս-արևելեան կողմից սահմանագծում է վիթխարի լեռնագագաթներով շրջապատուած բարձրավանդակը:

Քաղաքը, որի անունը կրում է նաև սարահարթը, տարածուած է լեռնադաշտի միխորշում և ծածկում է գետնի մի տափարակ բարձրութիւնն, որի ամենաբարձր մասը բոնում է մեծ և հնադարեան միջնաբերդը: Լայն և վիթխարի պատնէչները՝ տունէլանման գոներով ընդհատուած, շրջապատում են քաղաքը: Ջրջակայքի մի բարձր կէտից նայելով քաղաքը հրաշալի տեսարան է ներկայացնում: Բարձր երեւում են հին պարխապները, իսկ գրանցից էլ բարձր՝ միջնաբերդի լայն աշտարակը: Տների ծովը վայելուշ կերպով ընդմիջւում է երկարու բարակ մինարէներով. անթիւ ծխնելոյզները բարձրանում են հարթ կտուլների վրայ և տեղ տեղ երեսում են ծառերի կանաչ կատարները: Արևելեան և արևմտեան բարձրութեանց վրայ կանգնած են ամեհի ամրոցները. դրանք յիշեցնում են տեղի արտաքոյ կարգի նշանաւոր ռազ-

մագիստական դիրքը, որովհետեւ այդտեղ է գտընւում նաև այն դուռը, որի միջով կարող կլինի գրացիները Կովկասից և Անդրկովկասից անցնել դէպի Սնատօլիա:

Կերջին ռուս-տաճկական պատերազմի միջոցին Երզրումն երկարատես պաշարման դիմացւ. թէկ ռուսներին յաջողուեցքաղաքի ետևի բարձրութիւնների վրայից ներս մտնել, բայց կրկին գուրս մղուեցան: Այդ յարձակման հետ միաժամանակ ռուսները մտադրուել էին և հարաւային կողմից վրայ տալ, բայց զօրքերը չկարողացան ճիշտ ժամանակին և նախագծուած որոշմամբ գործել. այդ պատճառով յարձակումն յետ մղուեցաւ տաճկական թնդանօթաձիգ զօրքերից: Բայց և այնպէս ռուսները կարողացան վերջապէս քաղաքը գրաւել, սակայն Բերլինի դաշնադրութեան որոշման համաձայն՝ ստիպուեցան նորից թողնել կրզրումը:

Հեռուից ստացած առաջին տպաւորութիւնից յետոյ չէի սպասում, որ քաղաքում կգտնեմ կեղտոտ փողոցներ ու քարուքանդտներ: Վիթխարի պատնէչների ու քաղաքի ներքին մասի մէջ եղած տարածութեան վրայ ընդարձակ և անմարդաբնակ հարթութիւններ կային: Մեր տեսած առաջին փողոցները գիւղի տպաւորութիւն էին թողնում և որքան առաջ էինք

գնում գէպի քաղաքի ներսը, այնքան աւելի խտանում և կուտակում էին տները, այնքան աւելի եռում էր կեանքը: Խանութները շարուած էին միմեանց ետեից: ծախու էին հանուած ահազին քանակութեամբ եւրոպական չնչին իրեղիններ: Փողոցներում լիքն էին հայեր, յօյներ, պարսիկներ, քրդեր, զինուորներ, ոստիկաններ և ոտից մինչև զլուխը փաթաթուած կանայք: Մեծ, տունելաձև դաների ճանապարհներից երսում էին ահազին քանակութեամբ խանութներ, որ յիշեցնում էին էրզրումի նշանակութիւնը՝ վաճառականութեան համար: Խնձ զարմանք էր պատճառում ամրոցում եղած զօքքերի ահազին քանակութիւնը, որովհետև մինչև այժմ ասիական Տաճկաստանում ճանապարհորդելով թէի քաղմաթիւ զօրանոցներ և սպաներ էի տեսել, բայց ոչ մի տեղ զինուորներ չկային:

Երկար որոնելուց յետոյ գտանք վերջապէս հայկական «Պօղոս» կոչուած հիւրանոցը, որ մի կուլիսաձև, եռայարկ շինք է՝ կառուցուած հին և մեծ մզկիթի մօտ եղած հրապարակի վրայ: Երկարատև պահեցողութիւնից յետոյ ինձ մնում էր շուտով հետամտել հիւրանոցի խոհանոցը՝ բայց աւելի լաւ է լռեմ այդ մասին, որովհետև ճշմարիտ որ՝ ոչինչ լաւ բան չեմ կարող ասել:

Ընդհանրապէս ինձ այնպէս էր թւում, որ լաւ օր չպէտք է տեսնեմ այստեղ. ոստիկանական լրտեմները շարունակ շրջապատում էին ինձ և իւրաքանչիւր քայլս դիտում: Քաղաքը դեռ ևս ոլշարման դրութեան մէջ էր, որովհետև մի երկու ամիս առաջ էր տեղի ունեցել քրիստոնեաների և մահմեդականների այն ընդհարումը, որի միջոցին սպանուել էին մօտ քսան հոգի և երեք հարիւրն էլ վիրաւորուել: Արդէն Անգօրայից գալիս՝ ճանապարհին ինձ պատմել էին, որ տաճկաց զինուորները ներս խուժելով հայոց եկեղեցին՝ կամեցել են կողոպտել սրբազն անօթները. բայց մի երիտասարդ հայ՝ չլարողանալով տանել այդ անպատւութիւնը, հրազէնով սպանում է տաճիկ սպաններից մէկին: Սլոր գէպքից յետոյ քաղաքի հրապարակներում օրինաւոր պատերազմ է տեղի ունենում տաճիկների և քրիստոնեանների մէջ: Ոմանք այդ արիւմահեղ կոխմների պատճառը ուումներին էին վերագրում, իբրև թէ դրանք են զրգուում հայերին, բայց այդ զրոյցների մի խօսքն անգամ ճշմարիտ չէր, այդ պատճառով և ես ինձ թոյլ եմ տալիս՝ Կարնոյ գէպքերի ճշգրիտ պատմութիւնն անել:

1889 թուի ընթացրում էրզրումի վալին մի անստորագիր նամակ է ստանում, որի մէջ

գրուած է լինում՝ թէ հայոց դպրոցում պատերազմական մթերքներ են պահուում և թէ ախտեղ մի գործարան կայ, ուր զէնք ու զրահ են պատրաստում։ Նահանգապետը կարգալով այդ, ծիծաղում է և նամակը մի կողմը ձգում։ Բայց կարճ միջոցից յետոյ վալին երկրորդ անստորագիր նամակն է ստանում՝ նոյն բովանդակութեամբ։ Վալին այդ բանն իբրև հետաքրքրական և ծիծաղելի դէպք և ոչ թէ քաղաքական խնդիր դարձնելու նպատակով, պատմում է իր բարեկամին, Երջնկայի մոլթեսարիֆին։ Վերջինս անմիջապէս այդ իրողութիւնը հեռագրում է Կ. Պօլիս՝ մեծ վէգիրին և շուտով Ստամբուլից հրաման է գալիս Երզրումի վարչութիւններին՝ հայոց դպրոցն ու Եկեղեցին հետախուզելու։ Հրամանը կատարում է առանց պատճառների մասին տեղեկութիւն տալու սաստիկ վրդութած ու վիրաւորուած հայերին։

Խնչպէս պատմում էին՝ հետախուզութեան ժամանակ տաճիկ սպաները վայրենի կերպով են, վարում։ Նրանք պղծում են Եկեղեցու սրբազն անօթները և վիրաւորական խօսքեր ասում, բայց ի հարկէ ոչ մի զէնք չեն գտնուած։ Հասկանալի է, որ այս դէպքերը բոլոր քրիստոնեաներին վրդովեցին։ Հայերը պատճամաւորներ ուղարկեցին նահանգապետի մօտ՝ բա-

ցատրութիւն պահանջելու։ Վալին բաւական համարեց միայն պատասխանել՝ թէ եղածը կատարուել է բարձրագոյն հրամանով։ բայց հայ ժողովուրդը գոհ չմնաց այդ պատասխանից։ Վաճառականները մի բանի օր շարունակ փակեցին իրենց խանութիւններն ու գրասենեակները և այդպիսով զգալի խանգարումն առաջացրին քաղաքի սովորական կեանքի մէջ։ Նահանգապետն այդ տեսնելով կանչում է իր մօտ քրիստոնեայ համայնքների գլխաւորներին և պատուիրում, որ սրանը իրենց ազգեցութիւնը գործ դնեն՝ վաճառականներին համոզելու, որ կրկին բանան իրենց խանութիւնները։ Հոգևորականներն աշխատեցին այդ ուղղութեամբ, իրայց յաջողութիւն չունեցան։ Այն սակաւաթիւ վաճառականները, որ հետեւ բանց խրատներին՝ խանութները բացարին, միաներից հռչակուեցան իրեւ գաւաճաններ և ուրացողներ։ Յաւաջացան նորանոր պատակտումներ և կուսակցութիւններ։ յուզմոնքը նկատելի կերպով աճում էր քաղաքում և մահմեդականների հինաւուրց ատելութիւնը քրիստոնեանների դէմ սկսեց բորբոքուել։ Հետեանքն այն եղաւ, որ մահմեդականները յարձակումն գործեցին հայ ժողովրդի վրայ, հայոց եկեղեցու առաջը և այդպիսով առաջացաւ այն մեծ հրապարակային կոտորածը. Զօրքը միջա-

մտեց, բայց որովհետև զինուորները բացառապէս իսլամներ են, կրիւը ողբալի հետևանքներ ունեցաւ էրզրումի քրիստոնեայ աղքաքնակութեան համար։ Պաշտօնական տեղեկութեանց համեմատ՝ սպանուել էին 20 հոգի և 80 էլ վիրաւորուել, սակայն զոհերի թիւը տարաբաղդաբար շատ աւելի է եղել։

«Եւրոպա» հիւրանոցում ես սպառահեցի երկու ֆրանսիացի ճանապարհորդների, որոնք իրենց կառավարութեան յանձնարարութեամբ՝ զիտնական նպատակներով Պարսկաստան էին գնում։ Վալին մի քանի շաբաթ պահում էր նրանց էրզրումում։ իսկ էրզրում գալուց առաջ արդէն Բայրութում նրանք բանտարկուել էին ոստիկանութեան ձեռքով։ Նրանք զիտնական նպատակներով տեղազրական ստուերագծեր էին պատրաստել ճանապարհին, սակայն թուրքերը հասկացողութիւն չունենալով այդ մասին՝ կարծում էին թէ դրանք գաղտնի բարտէզներ են պատրաստում։ իրենց երկիրը նուաճելու նպատակով։ Նահանգապետն ամեն մի նորեկ եւրոպացի ճանապարհորդի լրտես էր համարում։ Իմ գալին էլամենեին ցանկալի չէր նրան։ Նա թէ ինձ տաճիկ պետութեան համար վտանգաւոր մարդ չէր համարում, բայց կասկածում էր, որ ես կարող եմ մի լրագրի թղթակից լինել և

էրզրումում պատահած արիւնահեղ դէպքերի մասին ճիշտ տեղեկութիւններ հաւաքել։

Փրանսիացի զիտնականներին իրենց դըժուար դրութիւնից ազատելու համար՝ հարկ էր եղել հեռագրական երկար բանագնացութիւններ սկսել ֆրանսիական հիւրատոսարանի և Կ. Պօլսի գեսպանատան մէջ։ Իմ էրզրում գալու երկրորդ օրը նրանք ճանապարհ ընկան։ Որպէս զի նրանք վտանգից ազատ մնան ճանապարհին, նահանգապետը բազմաթիւ զինուորներից բաղկացած մի պահորդախումբ էր նշանակել նրանց ուղեկցելու։ այդպիսով զիտնական արշաւանիքն այնպիսի այլանգակ կերպարանք էր ստացել, որ նոյն իսկ աւագակները կվախենային։

Իմ ամեն մի քայլը լրտեսում էին. եթէ այցելութեան էլ գնում մի տեղ, անպատճառ այդ տան գրան մօտ մի ոստիկան էր կանգնած լինում, որ պատուէր ունէր ամեն շարժումս դիտելու և հաղորդելու։ Մի սպայ եկաւ հիւրանոց և պահանջեց անցաթղթերս։ Իմ ունեցած բոլոր «թէսկէրէները» տարան «հիւրիւմէտ կօնսպի»։ Երբ ես շաբաթ օրը վճռեցի, որ կիրակի էրզրումից ճանապարհ ընկնեմ, ինձ յայտնեցին, որ «թէսկէրէներո» առ այժմ չեմ կարող յետ ստանալ և կողմնակի կերպով խորհուրդ

տուին ինձ՝ նահանգապետին այցելութեան գնալու

Սրդեօր ինձ էլ ֆրանսիացի գիտնականների վիճակին է սպասում, մտածեցի ես, բայց և այնպէս Եւլամպիօնի ուղեկցութեամբ զնացի վամփի մօտ: Նորին գերազանցութիւնը շատ էլ սիրավիր ընդունելութիւն չցոյց տուեց ինձ, սակայն ձեռքի շարժումով հրաւիրեց նստելու—պէտք է նկատեմ, որ ամեն մահկանացու չէ արժանանում այսպիսի բարեհաճ ուշադրութեան: — Ես համբերութեամբ սպասեցի մինչև որ վալին մի քանի գործեր վերջացրեց, որոնք գուցէ բոլորովին էլ շտապով չէին. նա մի ժիր զինուորական էր՝ ֆէրիկ փաշայի կամ գեներալ լէյտենանտի աստիճանով, ալեխանոն մօրուսով, զինուորական համազգեստով և անփոխարինելի ֆէսը գլխին: Մեր զրուցատրութիւնն այնքան երկար տևեց, որ բառացի չեմ կարող առաջ բերել:

Զեական, կարճ յառաջաբանից յետոյ, անմիջապէս սկսեցինք գործի մասին խօսել: Վալին հարց ու փորձ արեց ճանապարհորդութեանս նպատակի մասին և յետոյ ապացոյց պահանջեց, որ ես ճանապարհորդում եմ Անատօլիայի երկաթուղու վարչութեան յանձարարութեամբ և տաճիկ կառավարութեան թոյլտութեամբ: Ես ցոյց տուի նրան Անդօրրայի նահանգապետի

շրջաբերականը, որ բարեբաղդաբար մօտս էր մնացել. բայց այս վաւերաթուղթն աղդեցութիւն չունեցաւ նորին գերազանցութեան վրայ: Նա պահանջեց ինձնից Կ. Պոլսի կառավարութիւնից յատով թղթով թոյլտութիւն՝ էրզրումի նահանգում ճանապարհորդելու համար. ես պատասխանեցի, որ այդպիսի թուղթ չունենալս արգելը չպէտք է լինի ինձ Դիարբէքիրից Կ. Պոլսի վերադառնալ՝ էրզրումի և Տրապիզոնի վրայով:

Մօտաւորապէս մինչև այդ կէտը տևեց նահանգապետի և իմ մէջ տեղի ունեցած անմիջական խօսակցութիւնը. յետոյ վալին բազմաթիւ հարցումներ տուեց Եւլամպիօնին և բաւականին խխոտ ձեռք՝ առանց ուշադրութեան առնելու իմ ներկայութիւնը: Ես ստիպուած եղայ ընդհատելու նրանց՝ թոյլտութիւն լինդրելով, որ ես էլ մասնակցեմ խօսակցութեանը: Ես մի անգամ էլ շատ որոշ կերպով բացատրեցի, որ իմ բոլոր վաւերաթղթերը կարգին են, որ ոչ իրաւունք չունի ինձ այստեղ ուժով պահելու և թէ իմ գործունէութեան տեղից մինչև ծովի եղերքը վերադառնալու համար կառավարչական առանձին թղթերի կարիք չկար: Յետոյ պահանջեցի, որ վերադարձնեն իմ «թէսկէրէները». առանց այդ թղթերի չէի կարող շարունակել ճա-

Նապարհս։ Առարկեցի նոյնպէս, որ եթէ մերժուի անցաթզթերիս վերադարձնելը և ինձ քաղաքում երկար պահեն, այն ժամանակ տաճիկ կառավարութիւնը պատասխանատու կլինի իմ արած աւելորդ ծախսերի համար. այդ բանը պնդեցի յանուն այն ընկերութեան, որի պատուէրով այս ճանապարհորդութիւնը կատարեցի։

Վալին այլ ես ոչինչ չկարողացաւ ասել իմ բացատրութիւնների դէմ. ճշմարտութեան մէջն է իսկապէս իրաւունքը, կամ թէ ըստ թուրքի՝ «հակի գերշեկին իշխնդէ»։ Բայց ի հարկէ ճշմարտութեամբ միշտ իրաւացին չէ տեղի ունենում, թէկ զա թոյնից էլ դառը լինի—«գերշէկ օգիբի արժի իսապահ հակինը բուլամասն»—։

Նահանգապետը թոյլ տուեց, որ անցաթըլթերս վերադարձնեն, բայց մինոյն ժամանակ մերժեց տալ ուղեկից զաֆթիէններ, որ պահանջել էի յաջորդ օրուայ համար՝ կարծես թէ իր անհամբոյր ընաւորութիւնն ապացուցանելու նպատակով։ Վալին ինքն էլ համոզուած էր, որ այդ մերժումն ոչ մի իրաւացի պատճառի վրայ չէր հիմնում, բայց ես լաւ համարեցի այդ տեսակէտը շշեցտել և հետևեալը պատասխանեցի։ «Զերդ գերազանցութիւն, զաֆթիէնների պաշտօնն է ճանապարհորդին ամեն տեսակ վտանգներից պաշտպանել. ես շատ լաւ դիտեմ, որ այս երկում

այդ պաշտպանութիւնն ոչ մի տեղ չեն զլանում և իմ անցած երկար ճանապարհին, իզմիդից մինչև այստեղ, ամեն տեղ սիրով տուել են ինձ այդ պաշտօնական ուղեկիցների խումբը։ Անձնապէս ես կարիք չունեմ զինուորական պաշտպանութեան. եթէ գուք ինձ զաֆթիէններ չտաք, ես էրզրում չեմ մնայ և առանց դրանց ուղեկցութեան կշարունակեմ ճանապարհս։ Իսկ եթէ ճանապարհին յարձակուեն ինձ վրայ, ես ինձ կտպաշտպանեմ դարձեալ այնպէս, ինչպէս որ կտպաշտպանուեի զաֆթիէնների ներկայութեամբ։ Եւ առհասարակ մեծ յօյս չունեմ ոստիկանութեան օգնութեան վրայ։ Բայց հետս տանում եմ մի ամբողջ կապոց ստուերագծերի ու նկատողութիւնների, որոնց մէջ ամփոփուած են այն աշխատութեանց արդինքը, որ ես կատարել եմ երկաթուղին կառուցանող ընկերութեան պատուէրով։ Եթէ այդ նիւթերը կորչեն, այն ժամանակ զուր անցած կլինի ընկերութեան այդ նպատակի համար արած բոլոր ծախքերը և այդ բանի համար ես պատասխանատու կհամարեմ կառավարութիւնը, որի ներկայացուցիչն այստեղ դուք էք։ Եւ առ հասարակ ինչ էլ որ պատահելու լինի ինձ ճանապարհին, եթէ առանց զաֆթիէնների ուղեկցութեան գնամ, պատասխանատուն Զերդ գերազանցութիւնը կլի-

նի: Եթէ ինձ վրայ յարձակումն գործեն և վիրաւրանք կամ սպանութիւն տեղի ունենայ, պատճառը կհամարուի ոստիկան ուղեկիցներիս բացակայութիւնը և որովհետև դուք զանում էր տալ ինձ այդպիսի ուղեկիցներ, այդ պատճառով էլ բնականաբար պատասխանատուն դուք կլինէք:

Այդ էլ կարողացաւ ըմբռնել վալին. պատասխանատութեան երկիւլն ազգեց նրա վրայ: Նա յայտարարեց, որ թոյլ է տալիս երկու զափթիէ վերցնել, կանչեց մի ժանդարմի սպայ և յանձնաբարեց նրան՝ յաջորդ օրը զափթիէներ տալ ինձ ուղեկիցելու: Միւնոյն ժամանակ հրամայեց վերադարձնել անցաթղթերս և անմիջապէս մի հեռագիր ուղարկեց Կ. Պօլիս, մինխտութեանը հաղորդելով, որ ես հասել եմ էրդրում, պնդում եմ թէ այս ինչ նպատակով եմ ճանապարհորդում, երգումի վիլայէթում ճանապարհորդելու համար ոչինչ վաւերաթուղթ չունեմ և հետեւեալ օրը դէպի Տրապիզոն պէտք է ուղեկուեմ:

Մեր զրուցատրութիւնը վերջացաւ: Թէ այդ բաւականին երկար տևեց, բայց ես պէտք է գոհ մնայի հետևանքից, որովհետև երգում քաղաքը ոչինչ գրաւիչ բան չունէր: Նոյն իսկ աղատ կամքովս հազիւ թէ համաձայնէի երկար

մնալ այդտեղ: Փողոցները, տներն ու մարդիկ, երկիրը, քաղաքը և նոյն իսկ երկինքը՝ ցուրտ, բիրտ ու դաժան են երևում: Եղանակն էլ խիստ էր. արդէն մի շաբաթ առաջ լեռներում ձիւն էր եկել \*): Բացի դրանից տեղական խառնաշփոթութիւնները դեռ ևս չէին վերջացել: Նախորդ գիշերը կրկին ընդհարումն էր տեղի ունեցել, որի միջոցին հրացանի ձայներ էլ էին լսուել: Կառավարութիւնը պահնորդների թիւը կրկին աւելացրել էր և զինուորներին փամփուշտներ բաժանել: Սուանց իր կեանքը վտանգի ենթարկելու՝ մարդ չէր կարողանում գիշերը տանից դուրս գալ:

Վալին, Քայրի փաշան, լաւ հռչակ չունի: Իր նահանգում նա մի բռնաւոր իշխան է, անսահման ատելութիւն է տածում դէպի քրիստոնեանները, խորչում է օտարականներից և լրտեսներով շրջապատում իր չսիրած մարդկանցը \*\*): Եւ որովհետև իրեն համարում է հին

\* ) Երգըումի կլիման առ հասարակ շատ անյարմար է մարդաբնակութեան համար, այս բարձրավանդակի վրայ պտղատու ծառեր չեն աճում: Պատահում է, որ յուլիսի սկզբներին գետինը դեռ մի ոտնաչափ բարձրութեամբ ձիւնով է ծածկուած լինում:

\*\*) Նորերս Կ. Պօլսից տեղեկութիւն ստա-  
2

թրքական թէժիմի պաշտպան, խստիւ դիմադրում է իր վիլայէթում ճանապարհներ շինելուն։ 2է որ այդքան երկար ժամանակ առանց ճանապարհների էլ եօլա են գնացել և ինչ կարիք կայ ոռուների համար ճանապարհ հարթել։ Միմիայն մի առաքինութիւն են վերագրում Քայրի փաշային՝ եռանդ։

Մի քանի ամիս ինձնից յետոյ էրզրում էին գնացել երկու քրանսիացի սպայ՝ գրաֆ Cholet և Julien. Նրանք էլ սիրալիր ընդունելութիւն չէին գտել նահանգապետից և հէնց որ իջևանում են «Եւրոպա» հիւրանոցում, իսկոյն շրջապատում են լրտեսներով։ Հիւրանոցի տէրը հաւատացրել է նրանց, որ մինչեւ անգամ վալիի գաղտնի բանտեսները (ագենտները) կանացի հագուստների մէջ թափնուած՝ նստած են սանդուղի աստիճանների վրայ։ Վերին աս-

ցայ, որ դր. Զաադը, որ արգէն 10 տարուց ի վեր միջազդային առողջապահական խորհրդի պաշտօնեայ է, Քայրի փաշայի առաջարկութեամբ էրզրումից փոխադրուել է Եաֆա։ Փաշան առարկել է թէ նա հովանաւորում է հայերին, Ճանապարհներ է ցոյց տալիս, սովորեցնում է և այլն։ Բայց ինչպէս որ ինքս էլ անձամբ համոզուել եմ էրզրումում, դօկտօր Զաադի յանցանքը միայն ևեթ այն է, որ նա հայոց դպրոցի աշակերտներին բժշկում էր։

Թիճանի զուարճալի է լսել այդ երկու ֆրանսիացի սպաների պատմութիւնը։ Քայրի փաշան պատուիրում է հազորդել նրանց, որ ինքը միայն յաջորդ օրը կընդունէ նրանցը, որովհետեւ ուրբաթ օրը քրիստոնէի երես չէ ուզում տեսնել։ Դրութիւնն աւելի կամկածելի է դառնում, երբ յայտնում է, որ երկու ճանապարհորդներն էլ էրզրումի նահանգում ճանապարհորդելու առանձին արտօնութիւն չունեն Կ. Պօլսից։ ճանապարհորդները տեղեկանում են, որ Մուշի Մէհմէդ Զէքի փաշան \*), չորրորդ զօրաբանակի հրամանատարը, որի գերագոյն իշխանութեան տակ է գտնուում նաև էրզրումը և որի մօտ իրենք երգնակայում սիրալիր ընդունելութիւն էին գտել, լաւ յարաբերութեանց մէջ չէ Քայրի փաշայի հետ։ Նրանք շտապում են հեռագրով օգնութիւն և պաշտպանութիւն խընդրելու Զէքի փաշայից և շուտով զինուորական պատիւներ են վայելում։ Բայց այդ բանը կատաղեցնում է Քայրի փաշային։ լրտեսները շարունակ հետեւում են ճանապարհորդ սպաներին, սակայն վերջը «զօրքը յաղթում է ոստիկանութեանը» և շուտով վալին էլ հետաքրքրում է

\* ) Սասունի արիւահեղ կոտորածի տիրահըռչակ հերոսը։

ֆրանսիացի սպաների դրութեամբ, ամեն կերպ  
նպաստում է նրանցը և վերջն էլ «հիանալի տը-  
պաւորութիւն» է թողնում նրանց վրայ:

Ինչպէս ես, այնպէս էլ իմ մարդիկը դժգո՞հ  
էին երզրումից և ուրախ կլինէին՝ շուտով  
հեռանալու այդտեղից: Նոյն իսկ այն քրդերը,  
որ Դիարրէքիրից մինչև այստեղ ուղեկցել էին  
ինձ, մռայլ կերպարանք էին ցոյց տալիս. հէնց  
երզրում մտնելիս՝ նրանց բանը շատ վատ էր  
գնացել. գրաւել էին պարզամիտ աչքեր ունե-  
ցող բեռնակրի գրաստը, որովհետեւ նրա գրաս-  
տի թամբի տակ բէժիի բանտեսները մի փոք-  
րիկ կապոց ծխախոտ էին դտել: Քրդերը կա-  
տաղել էին. այս ողորմելի էակներն ի՞նչ գիտէ-  
ին բէժիի իրաւունքները: Իրենց հայրենիքում  
այդշափ խստութիւն չէին բանեցնում: Դիար-  
րէքիրի փողոցներում յայտնի կերպով ծախում  
են մաքսանենդ ծխախոտը: Քուրդը միայն այն  
ժամանակ յետ ստացաւ իր գրաստը, երբ վճա-  
րեց 40 պիտառ տուգանքը, որ այդ խեղն մար-  
դու համար շատ մեծ փող էր:

Զնայելով այն բոլոր տխուր փոքձերին և  
հիասթափմանը, որին ես ենթակայ եկայ երդ-  
րումում երեք օր մնալով, այնու ամենայնիւ մի  
քանի թանկագին յիշողութիւններս կապակցուած  
են այդ հեռաւոր քաղաքի անուան հետ: Մին-

չե այժմ էլ պահում եմ մօտս երկու փոքրիկ,  
ըստ ինքեան չնչին իրեր, իքրև թանկագին յի-  
շատակ տաճկահայկական երկրի կենդրոնից—  
մի փայտեայ ըմպանակ և մի պողպատից շի-  
նած մանրանկար ունելիք: Այդ երկու առարկա-  
ներն էլ «Ս ան ա ս ա ր ե ա ն դ պ ը ո ց» կո-  
չուած հայոց ուսումնարանի արհեստանոցի ար-  
դիւնքն են: Մեր երկրացի գոկտօր Զաադին եմ  
պարտական, որ ծանօթացայ այդ դպրոցի հետ,  
որի գերազանց կազմակերպութիւնն ու վարչու-  
թիւնը զարմացրեց ինձ: Այդ դպրոցի վարիչ-  
ների ձգտումներն արժանի են առանձնապէս  
պաշտպանուելու և յայտնագործուելու, որովհե-  
տեւ գերմանական քաղաքակրթութիւնից են  
սկիզբն առնում: Այն արժանաւոր և ազնուա-  
միտ մարդիկը, որ այդ հաստատութեան դե-  
կավարներն և ուսուցիչներն են, Գերմանիայումն  
են նախապատրաստուել՝ իրավործելու իրենց  
վսեմ գաղափարը, այն է իրենց ազգի վերա-  
ծնութեանը նպաստել՝ դաստիարակութեան և  
կրթութեան միջնորդութեամբ: Նրանք հոգով ու  
սրտով նուիրուած են գերմանական քաղաքա-  
կրթութեանը: Կեանքիս ամենահաճելի վայր-  
կեանների թւումն եմ դասում այն, դժբաղդա-  
բար սակաւաթիւ, ժամերը, որ ես բազդ ու-  
նեցայ անցկացնել այդ բարձրագոյն կրթու-

թիւն ստացած անձանց շրջանում և համոզուած եմ, որ գերմանական դաստիարակութիւնն ու գիտութիւնն օտար երկրների շատ սակաւաթիւ վայրերում այնպիսի սերտ բարեկամներ ունի, ինչպէս որ Երզրումի Սանասարեան դրաբոցում:

Սանասարեան դպրոցը գտնուում է քաղաքի հրամակարելեան անկիւնում, հայոց եկեղեցու մօտ: Դպրոցը բաղկացած է երկու մեծ, վայելուշ շէնքից և մի յարակից շինութիւնից, որի մէջ տեղաւորուած է դպրոցի հիանալի կաղմակերպութիւն ունեցող արհեստանոցը: Խնամքով պահպանուած և ընդարձակ պարտէզները շրջափակում են դպրոցական շէնքերը: Իսկ այդ բոլորը միասին շրջապատուած են մեծ պարփառվով և ամուր փակուած դրւերով: Դպրոցի այս վանքակերպ կղզիացումը շատ տեղին էր այն արիմահեղ խառնաշփոթութեան միջոցին, որ վերել յիշատակեցի, որովհետև այդ կոփուր տեղի ունեցաւ անմիջապէս դպրոցին կից տարածութեան վրայ, եկեղեցու առաջը: Բոլորովին անհիմն մեղագրանքները կասկած էին յարուցել՝ թէ դպրոցում պահուում է զէնք ու վառող՝ առաջիկայ հայկական ապստամբութեան համար. պաշտօնեաների խուզարկութիւնները հարկաւ ապացուցեցին այդ լուրերի հիմնովին:

ստութիւնը: Մատնիչներն այնքան հեռու էին գնացել, որ մինչև անգամ դպրոցի արհեստանոցը հոչակել էին իբրև թնդանօթների, հրազէնների և պայթուցիկ նիւթերի գործարան:

Սանասարեան վեցդասարանեան դպրոցը համապատասխանում է գերմանական միջնակարգ դպրոցների ծրագրին և յատկապէս կազմակերպուած է Լայցիցի Բարտի դպրոցի օրինակով: Փաստութեան առարկաներն են. հայերէն-գրաբար, հայերէն-աշխարհաբար, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, կրօն, եկեղեցական պատմութիւն, հայոց եկեղեցական պատմութիւն, ընդհանուր և հայոց պատմութիւն, աշխարհագրութիւն, բնական գիտութիւններ, թուաբանութիւն, հանրահաշիւ և երկրաշափութիւն: Արուեստներից անցնում են նկարչութիւն, երաժշտութիւն և երգ, մարմնամարզութիւն, լողալ և սահել: Եւրաքանչիւր աշակերտ պէտք է օրական մէկ ժամ արհեստով պարապէ և դրա համար դպրոց մտնելիս պէտք է ընտրէ հետեւալ երեք արհեստներից մէկը՝ փականագործութիւն, կահագործութիւն և կաղմարաբութիւն: Իսկ գործնական երկրագործութիւնը պարտաւորեցուցիչ է բոլոր աշակերտների համար: Սանասարեան վարժարանի և հայոց եկեղեցու մէջ եղած տարածութեան վրայ գլո-

նւում են մեծ բանջարանոցներ, որոնք ձմեռը  
սառուցով ծածկուելով՝ աշակերտներին միջոց  
են տալիս խումբ խումբ ազատ սահելու՝ սա-  
հակօշիկներով։

Վարժարանն ունի և իր սեպհական կա-  
լուածք գետինը։ Դպրոցի վարիչները ճիշտ ըմ-  
բռնելով թէ ինչ նշանակութիւն ունի երկրա-  
գործութեան և անամսապահութեան դարպա-  
ցումը մի նորափթիթ երկրի համար՝ վճռեցին  
մի առանձին դպրոցական շէնք կառուցանել  
երկրագործութեան համար։ բայց կառավարու-  
թիւնը մերժեց Սանասարեան վարժարանի ծրա-  
գրի այդ կերպ ընդարձակութիւնը։ Առ հասա-  
րակ ինձ այնպէս էր ժւռում, որ այդ դպրոցը հա-  
մակրութիւն և պաշտպանութիւն չէ վայելում  
կառավարչական շրջաններում։ Ընդհակառակը՝  
մի քանի անհասկանալի կարգագրութիւններով  
կառավարութիւնը կարծես թէ արգելը է ու-  
ղում լինել դպրոցի բարգաւաճմանը։ ի միջի  
այլոց, օրինակ, արգելուած է աշակերտների  
թիւը մի որոշ քանակութիւնից աւելացնել։  
Խստիւ արգելուած է նոյնպէս բնութեան տե-  
սարաններ նկարելը՝ իրականից։ Անկասկած  
տաճիկ կառավարութեան շահը պահանջում է,  
որ նա ամեն տեսակ պաշտպանութիւն ցոյց  
տայ դաստիարակիչ դպրոցներին։ միայն դար-

դացմամբ կարող են թէ ազգը և թէ երկիրը  
բարեկեցութեան բարձր աստիճանին համնել։  
Բայց թէ որքան անճիշտ գաղափար ունի տա-  
ճիկ կառավարութիւնը Սանսա. վարժ. ձգտում-  
ների վերաբերութեամբ, երևում է արդէն վերը  
յիշած և անցեալ տարի տեղի ունեցած խու-  
զարկութիւնից։

Երբ ես հոկտեմբերի 3-ին, դօկտօր Զատ-  
իկի ընկերակցութեամբ մտայ Սանասարեան  
վարժարանի պարտէզը, աշ կողմը գտնուող մեծ  
դաշիճի բաց պատուհանից ականջիս հնչեցին  
գերմանական մի նուագի ձայներ։ Մի ամբողջ  
խումբ ջութակահարների, որ աշակերտներից  
էր բաղկացած, սիրով և հասկացողութեամբ  
վարժութիւններ էր անում։ Մենք դիմեցինք  
դէպի սիրուն գորգերով գարդարուած խորհր-  
դարանը, որտեղ ես ծանօթացայ երեք տեսուշ-  
ների, այն է պ. պ. Աբովեանի, Մադաթեանի  
և Սովորեանի հետ։ Մի ժամուայ հետաքրքրա-  
կան զրուցատրութիւնից յետոյ՝ նոր բարեկամ-  
ներս առաջնորդեցին ինձ դէպի ընդարձակ և  
լուսաւոր դասարանները, գեղեցիկ ննջարաննե-  
րը և հրաշալի, գերմանական ձևով շինուած  
խոհանոցը, տեսայ նոյնպէս մատենադարանը,  
ընագիտական ժողովածուները, մարմնամարզու-  
թեան տեղը և արհեստանոցը։ Մատենադա-

րամսում կախուած էր դպրոցի հիմնադիր Մկրտչի Սամասարեանի մեծադիր պատկերը։ Այդ աղնիւ մարդու պատկերը շրջապատուած էր ծաղիկներով, պսակներով, տերևազարդ տունեկերով, ձօներով և սգանշաններով ծածկուած։ Հանգուցեալն այդ դպրոցը կառուցանելով մի անհման սիրուն կոթող է կանգնել Երզրումում։ Միայն մի քանի ամիս առաջ էր վախճանուել Սամասարեանը Փարիզում, 1890 թ. մայիսի 31-ին։ Նրա յիշատակը դեռ շատ սերունդներ անմոռաց կալահեն։

Սամասարեանը ծնուել է Տփխիսում 1818 թուի ապրիլի 22-ին։ սկզբնական կրթութիւնը ստացել է իր ծննդավայրի հայոց դպրոցում։ Առաջ նա եղել է մի վաճառականի գրագիր, ամսական 18 մանէթ ոռնիկ ստանալով, բայց իր աշքի ընկնող ընդունակութեանց չնորհիւ վերջը դարձաւ Վոլգայի շոգենաւային ընկերութեան գիրեկարօր։ Երբ նաւթն երևան եկաւ, նա իսկոյն իր բոլոր շոգենաւերը գործ դրեց վաճառականութեան այդ նշանաւոր ապրանքի փոխադրութեան համար և այդպիսով շօշափելի օգուտ տուեց ընկերութեանը։ Նա հարստութիւն գիզեց, շամումնացաւ և իր բոլոր կարողութիւնը գործ դրեց երիտասարդ հայերին ուսում տալով և քաղաքակրթութիւն տարածելով

իր ցեղակիցների մէջ։ Սանասարեան վարժարանի վերոյիշեալ երեք տեսուչները նրա հաշուով են Գերմանիայում ուսում ստացել։ Այդ երիտասարդներն եօթը տարի ուսանելուց յետոյ միայն միջոց ունեցան հանդիպելու իրենց բարերարին և խնամակալին։ մինչև այդ ժամանակ չէին տեսել նրան։

Այդ տեսակցութիւնից յետոյ գրանց յարաբերութիւններն աւելի սերտ բարեկամական կերպարանը են ստանում. «մինը նրան Ս.ստուծոյ պէս էինք սիրում», ասաց ինձ Աբուլեմը։

Սամասարեանը ձգտեց նախ ուսուցիչներ պատրաստել և այդ նպատակով բաւականին թուով երիտասարդներ ուզարկեց Զուլյերիա և Գերմանիա։ Տասն և երկուսը գերմանական դպրոցներումն էին ուսանում. գրանցից մէկը վախճանուեցաւ, ութը գործում են իրենց երկրի զանազան մասերում, երեքն էլ Երզրում են։ Սամասարեան վարժարանը 1880 թուին հիմնուեց։ Այժմ այդ դպրոցում ուսանում են 130 աշակերտ, որոնցից 32 ձրիաթոշակ են։ մնացածները վճարում են տարեկան 20 ֆունտ թուրքական ոսկի – ամեն բանի համար։ Դպրոցի ծախսերը ծածկում են հիմնադրի թողած դրամագլխի տոկոսիրով և աշակերտների թոշակագրամով։ Դպրոցի տարեկան եւսմուտը

համում է 3600 ֆնտ. թուրքական ռսկու: Հիմնական դրամագլխի տոկոսիքի մի որոշ մասը յատկացուած է աւարտած աշակերտներից ումանցը Գերմանիա ուղարկելու, որպէսզի դրանք աւարտելուց յետոյ՝ լրացնեն ուսուցչական խմբի պակասորդը: Որովհետև այն գետինը, որի վրայ կառուցուած է այժմեան գլուցը, եկեղեցու կալուածքն է և համայնքը դրա համար տարեկան 100 ֆունտ վարձ է տալիս, մտադրութիւն կայ առաջիկայում նոր շէնք կառուցանելու: Սահասրեանը կազմել է և մի շատ ընդարձակ մատենադարան, որի մէջ գտնւում են այն բոլոր գրուածքները, որ վերաբերում են հայ ազգին: Այդ մատենադարանը տիրոջ մահից յետոյ անցել է Սահասրեան վարժարանին, բայց ցայժմ Ս. Պետրոսուրդ է, որովհետև տաճիկ կառավարութիւնը չէ թոյլ տալիս էրդրում փոխադրելու: Միայն մի անգամ կարողացաւ տեսնել Սահասրեան վարժարանի հիմնադիրն իր դպրոցը—1885 թ. աշնանը:—Նա մանկան պէս ուրախացել էր՝ տեսնելով իր հիմնարկութեան արագ բարդաւաճումը:

Յառաջ քան էրդրումից հեռանալը, մի թեժեակի հայեացք ձգենք անցած գնացած ժամանակների վրայ: Այս հին հայկական բերդաբարձրի սկզբնական անունն է Կարին. Անտ-

տօլիս զօրապետը քաղաքի անունը փոխեց և անուանեց Թէոդոսուպոլիս՝ ի պատիւ Թէոդոս Փոքրի: Բիւզանդական կայսրութեան ժամանակ, 415 թուին հիմնուած Թէոդոսուպոլիսը համարւում է հայկական երկրի ամենանշանաւոր ամրոցը: Այս հին հիմնարկութեան արևելեան կողմն էր գտնւում Արծն մեծ քաղաքը, որ վերջը պատմագիրների ասելով 800 եկեղեցի պէտք է ունենար: Այդ քաղաքն աւերուեցաւ ու ջնջուեցաւ Սելզուկեան թուրքերի ձեռքով 1049 թուին. ընակիչները տեղափոխուեցան Թէոդոսուպոլիսի վերջինս, որ երկար ժամանակ հոռմայեցոց իշխանութեան ներքոյ էր, ստացաւ Արծնէ-ըում անունը, վերջը դարձաւ էրդրում: 13-րդ դարում էրդրումի վրայ յարձակուեցան և աւերեցին Մոնղոլները, բայց շուտով եկան թուրքերը և նրանց ձեռքից խլեցին այդ քաղաքը: 1829 թուին ուսւմները նուաճեցին էրդրումը, բայց Աղրիանապօլի դաշնադրութեամբ՝ կրկին վերադարձին թուրքերին:

Էրդրումը շատ մեծ նշանակութիւն ունի վաճառականութեան համար. այն բոլոր ապրանքները, որ արտասահմանից Պարսկաստան է մտնում, և որի տարեկան արժէքը համարում է 40 միլիոն մարկի, էրդրումի վրայով է ամենում: Այդ քաղաքից է տարածւում մեծ մասամբ

Նաև երկրի մէջ ներմուծուած ապլանքը. իսկ երգ-  
բումի արտադրութիւնն է մագեղէն, մորթեղէն—  
այծի, ոչխարի, գոմշի, — այծի և ոչխարի բուրգ,  
մեղբամոմ, ճրաւու, պղինձ և կապար: Բայց  
երկրի իսկական հարստութիւնը, ինչպէս նկա-  
տում է նաև Cholet, կազմում է ոչխարի մե-  
ծարանակ վաճառականութիւնը: Ոչխարը քըր-  
դերից զնում են թափառական վաճառականնե-  
րը և ծախում մեծ վաճառականներին, որոնք  
յետոյ տամնեակ հազարից բաղկացած հօտերը  
Տրապիզոնի, Սամսօնի, Հալէպի, Երբեմն մին-  
չև անգամ Եաֆայի վրայով Եւրոպա կամ Եգիպ-  
տոս են ուղարկում: Խեղճ անասուններն եր-  
բեմն երեք ամիս ճանապարհին են լինում. Նը-  
րանկը այդ երկար ճանապարհորդութեան միջո-  
ցին արածելով են զնում և իրենց քաշի մինչև  
14% կորցնում են մինչև ծովափ հասնելը: 2ը-  
նայելով այդ ոչխարների թուլութեան և երբեմն  
հիւանդութեան, այնուամենայնիւ Երզրումի վա-  
ճառողներն ահազին գումարներ են վաստա-  
կում: Ոչխարի վաճառահանութիւնն այնչափ  
նշանաւոր է, որ տարեկան համեստմ է 1,200,  
000 տաճկական ոսկու (մօտ 20 միլիոն մարկ)՝  
և այդ գումարի մեծ մասը մնում է Երզրումի  
հայերի ձեռքբը:

Էրզրումում կան ռուսական, ֆրանսիական և իտալական հիւպատոսարաններ. գերմանական շահների պաշտպանութիւնը ռուսաց հիւպատոսի ձեռքին է:

Երզրումի բնակիչներն են՝ թուղթեր, հայեր,  
կաթոլիկ հայեր, պարսիկներ, յոյներ և սակա-  
ւաթիւ վրացիք ու հրէաներ:



մասնավույշ մահմառ մայ եւ առաջը  
տակաց զամարանաւույշ մայմառ և  
մի բառու դժիթիւնաւույշ մայմառ  
և մասնավույշ մայ եւ առաջը  
տակաց զամարանաւույշ մայմառ  
մի բառու դժիթիւնաւույշ մայմառ  
մասնավույշ մայ եւ առաջը



6336

804

0002065

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0002065

